Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Էլեկտրական ցանցին միացման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման և միացման ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տարեկան ցուցանիշների ուսումնասիրություն, համապատասխան վերլուծական տեղեկանքի կազմում:
- Սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու նպատակով իրականացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Հաշվարկային կենտրոն», «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն», «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալների ուսումնասիրություն, արդյունքների ամփոփում:

- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման №0092 լիցենզիայի պայմանների հավելվածով ամրագրված լիցենզավորված անձի անհրաժեշտ հասույթի և սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայում փոփոխությունների իրականացում:
- Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակում:
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկման որակին վերաբերող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն:
- Հանրային կազմակերպությունների (ըստ ընտրված ցանկի) 2019 և 2020 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի իրականացում:
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվության ձևերի լրամշակում:
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը ՀՀ հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության ծրագրի մշակում ՀՀ Ազգային ժողով:

- Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝
  - սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
  - էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: